ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍՄԱՐԹ ՖՐԵՆԴՍ ՍՊԸ -ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/130 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	WDS-S7	Shenzhen WDS Electronic Technology Co., Ltd.	Ինֆրակարմիր զոդման կայանք Նախատեսված է միկրոսխեմաների ապամոնտաժման և վերամոնտաժման աշխատանքների համար: Սարքը ձեռքով կառավարվող է ապահովում է բարձր ճշգրտությամբ աշխատանք՝ օգտագործելով X, Y և Z առանցքների ուղղաձիգ ուղորդիչներ, որոնք թույլ են տալիս կատարել նուրբ ճշգրտումներ և արագ դիրքավորում: Կառավարումը իրականացվում է սենսորային էկրանի միջոցով, որը միացված է միկրոկոնտրոլերին: Այն հնարավորություն ունի պահպանելու ջերմաստիճանի կորերի տվյալները, ապահովված է գաղտնաբառով մուտքի և փոփոխման ֆունկցիայով: Գործողության ընթացքում ջերմաստիճանի տվյալները ցուցադրվում են կորերի տեսքով, իսկ համակարգը ունի ակնթարթային վերլուծության հնարավորություն: Սարքը պետք է ապահովի անկախ ջերմաստիճանային կառավարում տաքացման երեք գոտիներում. վերին և միջին գոտիները տաքացվում են տաք օդով, իսկ ստորին գոտին՝ ինֆրակարմիրով: Վերին գոտու տաքացվող գլխիկը շարժական է, կարգավորվում է վերև-ներքև, և վերին և ստորին տաքացուցիչները կարող

			են միաժամանակ աշխատել բազմաստիճան ջերմաստիճանային պրոֆիլով: Ստորին ինֆրակարմիր տաքացուցիչը ապահովում է տպասալի հավասարաչափ տաքացում: Սարքը օգտագործում է բարձր ճշգրտությամբ K-տիպի թերմոզույգ՝ հետադարձ կապի կառավարման համար որի ջերմաստիճանը վերահսկվում է ±3°C ճշգրտությամբ, ունի արտաքին ջերմաստիճանի չափման ինտերֆեյս: Թերմոզույգի համար առկա է մեկ միացման ինտերֆեյս: Տպասալը տեղադրվում է V-աձև ակոսում, իսկ ունիվերսալ շարժական ամրակները պաշտպանում են եզրային բաղադրիչները և կանխում տպասալի դեֆորմացիան: Համակարգը համալրված է հոսքի հզոր օդափոխիչով, որը արագ սառեցնում է տպասալը: Ներառված է վակուումային պոմպ և արտաքին վակուումային բռնիչ՝ BGA տիպի պատյան ունեցով միկրոսխեմաների հարմարավետ տեղադրման և հանման համար: Սարքը ունի ազդանշանային համակարգ, որը տեղեկացնում է աշխատանքի ավարտի մասին, ինչպես նաև «նախազգուշացման» ֆունկցիա: Անվտանգության համար սարքը ունի արտակարգ կանգի կոճակ և ավտոմատ անջատման պաշտպանություն: Ջերմաստիճանի անկառավարելի բարձրացման դեպքում համակարգը ինքնաբերաբար անջատում է սնուցումը: Ներառված է կրկնակի գերտաքացման պաշտպանություն: Սարքը պետք է լինի CE սերտիֆիկացված: Սարքի նախատեսված ընդհանուր հզորությունը առնվազն 4800 Վտ է՝ վերին տաքացնող տարրը ապահովում է միջինում 800 Վտ, ստորին տաքացնողը՝ ոչ պակաս 1200 Վտ, ստորին ինֆրակարմիր տաքացնող համակարգը առնվազն՝ 2700 Վտ հզորություն: Սարքը սնվում է AC 220V ±10%, 50Hz ցանցից: Այն կարող է աշխատել տարբեր չափսերի տպասալերի հետ. առավելագույն չափսը 480×345 մմ է, նվազագույնը՝ 10×10 մմ: Տպասալի հաստության թույլատրելի միջակայքը կազմում է 0.3–5 մմ: Սարքը նախատեսված է նաև տարբեր չափսերի էլեկտրոնային կոմպոնենտների համար որոնց չափսերն են սկսած 1×1 մմ-ից մինչև 60×60 մմ: Սարքի ընդհանուր չափսերը պետք է լինեն ոչ ավելի քան՝ 660×610×600

			մմ, զանգվածը ոչ ավել քան 35 կգ: Առաջարկվող սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО СМАРТФРЕНДС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪҶҲ-ЕЦѪЦҶҨҎ-26/130 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
2			